18.05.2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ԳԵՎՈՐԳ ԱՐՄԵՆԱԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՑ

Իրազեկում

(հանրային հավաք և երթ անցկացնելու մասին)

Պարոն Ավինյան,

ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով՝ իրազեկում եմ, որ 2026 թվականի մայիսի 21-ին անցկացնելու եմ հանրային հավաք և երթ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում՝ հանդես գալով որպես հավաքի և երթի կազմակերպիչ ու ղեկավար: Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով իրազեկման ներկայացվող պահանջների մասով հետևյալ տեղեկությունը՝

1. Հանրային հավաք անցկացման վայր՝ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական կենտրոնի հարակից տարածք:
2. Հավաքի անցկացման սկիզբ և ավարտ՝ 2026 թվականի մայիսի 21՝ ժամը 17:00 – 2026 թվականի մայիսի 21՝ ժամը 21:00:
3. Հավաքի նպատակ՝ նախընտրական քարոզչություն:
4. Հավաքի մասնակիցների սպասվող թիվը՝ 1000-մարդ:
5. Հավաքի ընթացքում օգտագործվելու են բարձրախոսներ, դրոշներ, պաստառներ, ձայնի ուժեղարարներ: Հավաքի և երթի ընթացքում օգտագործվելու է նաև Պիկապ ավտոմեքենա՝ ձայնի ուժեղարարներով:
6. Հավաքի ընթացքում անցկացվելու է նաև երթ՝ սկսած 18:00-ից 21:00՝ հետևյալ ուղղությամբ՝ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական կենտրոնի հարակից տարածք – Ֆրանսիայի հրապարակ – Սայաթ-Նովա պողոտա – Տերյան փողոց – Հյուսիսային պողոտա – Աբովյան փողոց – Ամիրյան փողոց – Մաշտոցի պողոտա – Միսաք Մանուշյանի անվան պուրակ:
7. Հավաք-երթի ընթացքում կարգադրիչներ չեն լինելու:
8. Գևորգ Արմենակի Ստեփանյանի՝ որպես հավաքի կազմակերպչի և ղեկավարի տվյալները

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝

1. ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը ,
2. սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով,
3. սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացնում եմ՝

1. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Հանրային հավաքի
կազմակերպիչ և ղեկավար
Գևորգ Արմենակի Ստեփանյան